ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ- 1/2-Լ

(«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունման մասին)

11.02.2025թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ինը անդամից կազմված հաշվիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով), մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանի, անդամներ՝ Աշոտ Խլոյանի, Գագիկ Մայիլյանի, Կարինե Ղաշանգյանի, Աստղիկ Գևորգյանի, Հեղինե Մանուկյանի, Նազիկ Մալխասյանի, Հովհաննես Եգորյանի և Հասմիկ Թադևոսյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 9.1-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 15.25-րդ կետի պահանջներով,

հաշվի առնելով 10.02.2025 թվականին տեղի ունեցած ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունելու մասին օրակարգային հարցով քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 11.02.2022թ. թիվ 2-Լ արձանագրությունը,

նկատի ունենալով այն, որ՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2811 փաստաբանից մասնակցել է 1550 փաստաբան,

հիմք ընդունելով քվեարկության արդյունքներն առ այն, որ քվեարկության մասնակիցների կեսից ավելին՝ 1425 ձայնով, կողմ է քվեարկել «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունելու մասին օրակարգային հարցով, հետևաբար հայտարարությունը համարվում է ընդունված,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել ««ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունելու օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 10.02.2025թ. քվեարկության արդյունքները, սահմանելով, որ քվեարկելու իրավունք ունեցող 2811 (երկու հազար ութ հարյուր տասնմեկ) փաստաբաններից

քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1550 (հազար հինգ հարյուր հիսուն) փաստաբանների՝ 1425 (հազար չորս հարյուր քսանհինգ) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 92%) ձայներով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից հայտարարությունը համարվում է ընդունված (հաստատված):

2. Քվեարկելու իրավունք ունեցող 2811 (երկու հազար ութ հարյուր տասնմեկ) փաստաբաններից քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1550 (հազար հինգ հարյուր հիսուն) փաստաբանների՝ 1425 (հազար չորս հարյուր քսանհինգ) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 92%) ձայներով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից հաստատել ««ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունումը:

3. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Գևորգյան

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝ Աշոտ Խլոյան

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Մայիլյան

Դարինե Ղաշանգյան

Հեղինե Մանուկյան

Նազիկ Մալխասյան

Հովհաննես Եգորյան

Աստղիկ Գևորգյան

Հասմիկ Թադևոսյան